Արձանագրություն N 8

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2016թ. դեկտեմբերի 2-ի արտահերթ նիստի
(ք. Երևան, Միհր Մկրտչյան 5)

Ներկա էին՝
Խորհրդի նիստը վարեց՝ Պավել Սաֆարյանը:
Խորհրդի անդամներ՝ Պավել Սաֆարյանը, Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Սահակյանը, Մելիտա Հակոբյանը, Կարեն Միրզաբեկյանը, և Աբգար Մկրտչյանը:
Մասնակցում էին՝ Լևոն Խալիկյանը, Տարոն Հակոբյանը, Ալիսա Երանոսյանը, Արարատ Սարգսյանը, Արմեն Տերտերյանը և Վոլոդյա Թամրազյանը:
Քարտուղար՝ Արծրուն Նաջարյան:

Օրակարգ

Լսեցին՝
1. Տեսչական մարմնի 2017թ. ստուգումների ծրագրի հաստատում:
Զեկուցող՝ Լևոն Խալիկյան
Արտահայտվեցին՝ Պ. Սաֆարյանը, Հ. Այվազյանը, Ա.Սեդրակյանը, Կ.Միրզաբեկյանը, Մ. Հակոբյանը:
Որոշվեց՝ Հաստատել տեսչական մարմնի 2017 թվականի ստուգումների ծրագիրը ըստ ներկայացված ցանկի:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝
2. Կառավարման խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում տեսչական մարմնի կողմից իրականացված աշխատանքների հաշվետվություն.
Զեկուցող՝ Լևոն Խալիկյան
Արտահայտվեցին՝ Պ. Սաֆարյանը, Հ.Այվազյանը, Կ.Իսախանյանը, Կ.Միրզաբեկյանը, Կ. Սահակյանը:
Առաջարկվեց՝ հաշվետվությունն ընդունել ի գիտություն: Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը հրավիրել խորհրդի նիստ, 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել տեսչական մարմնի 2017 թվականի աշխատանքային ծրագիրը՝ եռամսյակային կտրվածքով՝ էլեկտրոնային տարբերակով շրջանառելու, քննարկելու և հաստատելու համար:
Որոշվեց՝ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝
3. Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի հաշվետվությունը՝ ս.թ մայիսի 5-ից մինչև նոյեմբերի 25-ը ընկած ժամանակաշրջանում տեսչական մարմնի կողմից կատարված աշխատանքների արդյունավետության վերաբերյալ:
Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ՝ Արարատ Սարգսյան
Արտահայտվեցին՝ Պ. Սաֆարյանը Կ.Միրզաբեկյանը, Հ. Այվազյանը, Ա.Գևորգյանը, Կ.Իսախանյանը, Լ.Խալիկյանը, Ա.Սարգսյանը:
Առաջարկվեց՝ Ներկայացված հաշվետվության 3-րդ կետը հանել, Հ. Այվազյանին առաջարկվեց քննարկել, անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան փոփոխություններ խորհրդի կողմից բյուջեի հաստատման հարցի վերաբերյալ:
Որոշվեց՝ հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Լսեցին՝
4. Տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանության նախագծի ներկայացում կարծիքի:
Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ՝ Արարատ Սարգսյան
Արտահայտվեցին՝ Պ. Սաֆարյանը, Կ.Միրզաբեկյանը, Հ. Այվազյանը, Ա.Գևորգյանը, Կ.Իսախանյանը, Լ.Խալիկյանը, Կ.Սահակյանը:
Առաջարկվեց՝ Բարեփոխումների խմբի և տեսչական մարմնի կողմից ևս մեկ անգամ քննարկել և լրամշակել կատարողականի գնահատման մեթոդաբանության նախագիծը և վերջնական համաձայնեցված տարբերակը ներկայացնել խորհրդի հաստատմանը:
Որոշվեց՝ Բարեփոխումների խմբի աջակցությամբ լրամշակել նախագիծը և 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով ներկայացնել խորհրդի հաստատմանը:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Խորհրդի անդամներ՝

Պավել Սաֆարյան

Կարեն Իսախանյան

Հայկ Այվազյան

Արմեն Գևորգյան

Կարեն Սահակյան

Կարեն Միրզաբեկյան

Աբգար Մկրտչյան

Մելիտա Հակոբյան